ՍԻՐՎԱՐԴ ԱՍՐՅԱՆ

Խ.Աբովյանի անվան հայկական պետական Մանկավարժական համալսարանի հայ նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԵՎ ՈՒԺԵՂ ԱՆՀԱՏԻ ԽՆԴԻՐԸ ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ «ՃԱՅԵՐԸ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

«Հզոր, միաձույլ Երամի գոյությունը սնամեջ խաբկանք էր, որովհետև թույլ անհատների միությունը երբեք չի դառնում հզորություն»:

Ռ. Հովսեփյան «Ճայերը»

Հոդվածում անդրադարձել ենք Ռ. Հովսեփյանի «Ճայերը» պատմվածքում առաջ քաշված ազգային միասնության գաղափարին, ազգային միասնության հարցում պետության ղեկավարի, ուժեղ անհատի, հզոր իշխանության և այլ հիմնահարցերի: Հիմնավորել ենք ուժեղ անհատի, ինչպես նաև պատմվածքում այլաբանորեն ներկայացված գաղափարական առաջնորդի՝ Ուսուցչի, և երկրի՝ Երամի առաջնորդի կերպարների միջոցով արծարծված ասելիքը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ առաջնորդ, իշխանություն, ուժեղ անհատ, անհատների միություն, հզոր Երամ, Ուսուցիչ, ազգային միասնության գաղափար, գաղափարական առաջնորդ:

«Ճայերը» հոդվածում մենք փորձել ենք անդրադառնալ շատ կարևոր մի խնդրի, որին բոլոր ժամանակներում անդրադարձ է արվել, որը, սակայն, ժամանակային տեսանկյունից տարբեր կերպ է ընկալվել: Փորձել ենք հիմնավորել այն հանգամանքը, որ հայրենասիրության մասին շատ է գրվել ու խոսվել, սակայն բոլոր գեղեցիկ ճառերը միշտ էլ դատարկ են ու սնամեջ, եթե դրանք անթաքույց սիրո դրսևորումներ չեն, կեղծ են ու շինծու և չեն նպաստելու ազգային միասնության գաղափարի արմատավորմանը: Հայրենասիրության անբացատրելի զգացմունքի մասին շատ հաճախ խոսում են նրանք, ովքեր պատեհ պահերին լքում են հայրենիքը: Ռուբեն Հովսեփյանի այս պատմվածքը պեղում է մարդկային հոգու նրբին ծալքերը՝ փոխաբերական կերպարների միջոցով անուղղակիորեն սահմանելով հայրենասիրության բանաձևը: Պատմվածքը զերծ է խրատաբանությունից (որը թվում է առաջին հայացքից), այն մերօրյա ընդվզում է, կոչ և հորդոր:

Ռ. Հովսեփյանի փոքր ծավալի արձակը հայրենասիրության յուրահատուկ դասագիրք է, որի յուրաքանչյուր պատմվածք հուզիչ պատում է , ուր անուղղակի կերպով սահմանվում է հայրենասիրությունը որպես արժեք, գաղափար ու զգացողություն: Հայրենիքի ու հայրենասիրության մասին գաղափարական ձևակերպումները ծնվում են գրողի ենթագիտակցության շերտերից՝ վերածվելով խորունկ ու խորիմաստ ստեղծագործությունների(«Պատմության դասը», «Վերադարձ», «Ճայերը» և այլն):

«Ճայերը» պատմվածքում գրողը բարձրաձայնում է տարբեր հարցեր, որոնք կան մեր իրականության մեջ, և որոնք սերտորեն առնչվում են հայրենիքի գաղափարին: Այդ հարցերի մեջ կարելի

է առանձնացնել ազգային միասնության գաղափարը, միասնություն, որին կարելի է հասնել միայն հզոր անհատներ ունեցող ուժեղ հասարակության դեպքում. **«Հզոր, միաձույլ Երամի գոյությունը սնամեջ խաբկանք էր, որովհետև թույլ անհատների միությունը երբեք չի դառնում հզորություն»** (Հովսեփյան Ռ. «Ճայերը», Ընտիր երկեր, Սովետական գրող, 1987, էջ 526):

Պատմվածքը սովորական պատում չէ, այլ արձակ բանաստեղծություն, ձևի և բովանդակության ներդաշնակության մեջ փոքր ծավալի գլուխգործոց: Առաջնորդի և Ուսուցչի, ժողովրդի և իշխանության փոխհարաբերությունների փոխաբերական դրսևորումները ներքին ենթատեքստ ունեն. Չհպատակվելու կոչ ուժեղի և կամազուրկի համատեքստում, հայրենի հողին ամեն գնով կառչելու հորդոր, միասնականության և ազատ մտածողության անհրաժեշտություն, որոնք գրողը համարում է լավագույն ապագայի երաշխիքներ: Նախ՝ չպետք է լքել հայրենիքը, այլ պետք է շենացնել, երբեք չփոխել հայրենի մի կտոր հողը օտարի՝ սահմաններ չճանաչող տարածությունների հետ:

Հայրենասիրության հենքի վրա գրողը կառուցել է Ուսուցչի և Առաջնորդի փոխաբերական կերպարները, որոնց գաղափարական տարաձայնություններից էլ ծնվում է պատմվածքի հիմնական ասելիքը: Այլաբանորեն ներկայացվող ասելիքը Ռ. Հովսեփյանի պատմվածքում աստիճանաբար առաջ է մղում հայրենիքի սիրո գաղափարը, որի կրողը մի դեպքում ուժեղ ու հզոր անհատն է՝ Առաջնորդը, մի այլ դեպքում՝ Ուսուցիչը՝ գաղափարական առաջնորդը: Երկուսն էլ կարևորելով՝ գրողը մեզ մտորել է տալիս, թե ապագայի լավագույն երաշխիքը ազգային միաուսնության գաղափարի շուրջ համախմբվածությունն է: Մեր ուսումնասիրության մեջ կարևորել ենք գրողի առաջ քաշած բոլոր այն խնդիրները, որոնք տանում են դեպի այդ համախմբումը: Վերլուծելով գրողի՝ պատմվածքում արտահայտած յուրաքանչյուր միտքը, բացահայտել ենք, որ անբեկանելի, դարերով եկած ճշմարտությունն է միայն մեր ազգային միասնության ու փրկության գրավականը. Ա՞յդ չի ակնարկում Ռ. Հովսեփյանը, երբ գրում է, թե հայրենիքի թեկուզ օրեցօր նվազող գեղեցիկ լիճը մեծ աշխարհների ծովերի հետ չպետք է փոխել…

Գրողի մտահոգությունը, որ արտահայտվում է Ուսուցչի՝ գաղափարական առաջնորդի մտորումների միջոցով, ավելի քան տեղին է, որովհետև հայրենիքը լքել-չլքելու խնդիրը մերօրյա է, վտանգավոր: Ռ. Հովսեփյանը փոքրիկ պատումի միջոցով բարձրաձայնում է խնդիրների մասին, որոնք պիտի մտահոգեն հասարակության յուրաքանչյուր անդամին.

1. Հայրինիքը լքել-չլքելու խնդիրը. փախչելու գաղափարը լուծում չէ.
2. Ուժեղ անհատի խնդիրը՝ ի դեմ Առաջնորդի.
3. Գաղափարական առաջնորդի դերի կարևորությունը՝ ի դեմ Ուսուցչի.
4. Ազգային միասնությունը՝ որպես լավ ապագայի երաշխի.
5. Ուսուցչի և Առաջնորդի փոհարաբերությունը:

Պատմվածքում մենք տեսնում ենք, որ ճայերի Երամը, նրանց Ուսուցիչը և Առաջնորդը, ինչպես նաև նոր ծնված ճտերի սերունդը այն «կերպարներն» են, որոնց առօրյա հարաբերություններում ու երկխոսություններում ծնվում է ճշմարտությունը: Երամի Առաջնորդը հրաշալի, կատարյալ ճայ է՝ Երամի հպարտությունն ու երազանքի իրականացումը.«Առաջնորդն իր հավասարը պիտի չունենա, բայց Երամը նրա առաջնորդությամբ պիտի կարողանա անել այն ամենը, ինչ ինքն է կարողանում անել: Ոչ մեկը ճայերից չգիտեր ամենաբարձրերում ճախրելու գաղտնիքը…»/Ճայերը, Ընտիր երկեր, Սովետական գրող, 1987, էջ 517: Առաջնորդի օրինակով ճայերը

կարող են հասնել աստղերին կամ սուզվել մինչև լճի հատակը: Կապույտ ժայռը կարծես հարաբերական այն հայրենիքն է, որի շրջակա տարածքում լքել-չլքելու շուրջ մտքերի անվերջ պայքար է ընթանում՝ մտահոգելով Ուսուցչին. «…քաղցը չստիպի՞ հանկարծ թխսկաններին՝ լքել բները»:/Ճայերը, Ընտիր երկեր,էջ 518/: Հեղինակը մտահոգված է հայրենիքը լքել-չլքելու հարցի արդիականության շուրջ ու հենց ինքն էլ տալիս մտահոգող խնդրի բանալին: Հայրենիքը չի կարելի և չպետք է լքել: Փախուստը ելք չէ:

Գրողի մտորումներն ու մտահոգությունները պատմվածքում ներկայացվել ե Ուսուցչի մտքերի միջոցով, որոնցովնա համարձակորեն հակադրվում է Երամի Առաջնորդին: Պատմվածքի գլխավոր կերպարները դասական մտածողության օրինակներ են. Հենց նրանց միջոցով էլ առաջ է տարվում ասելիքը:Հետաքրքիր զուգահեռներով գրողը ներկայացնում է Ուսուցչի և Առաջնորդի գաղափարական տարաձայնությունը, որից էլ ծնվում են հակասությունները: **Ուսուցչին մտահոգողը հայրենիքը չկորցնելու գաղափարն է, մինչդեռ Առաջնորդին հետաքրքրում է մեծ Երամ ունենալու տեսլականը:** «Նա ձեզ ասաց, որ մենք հզոր երամ ենք,-ասաց Ուսուցիչը,-արագ թռչել գիտենք և առանց զոհերի կարող ենք հասնել աշխարհի ցանկացած ծայրը:Դայց նա չասաց, թե մենք կորուստ չենք ունենա: Մենք կգտնենք ջուր, ձուկ, ընդարձակ երկիր, բայց կկորցնենք … Հայրենիք: Եվ էլի կմեռնենք»: (Հովսեփյան Ռ. «Ճայերը», Ընտիր երկեր, Սովետական գրող, 1987, էջ 520-521):

Հայրենիքը կորցնել՝ նույնն է, թե մեռնել՝ ասում է գրողը: Առաջնորդը, իհարկե, համաձայն չէ Ուսուցչի հետ. «Հայրենիքը մի՞թե մենք չենք…», իսկ վերջինիս կարծիքով՝ «Հայրենիքը այս մի կտոր արևոտ լճափն է»:

Ուսուցչի և Առաջնորդի կերպարային լուծումների մեջ, բաց իրարամերժ բնութագրումներին, գրողը նկատելիորեն ընդգծել է Առաջնորդի ճակատագրով ի վերուստ տրված դերը. «…աշխարհի ամենադժբախտ արարածները առաջնորդներն են»/Ճայերը,Ընտիր երկեր, էջ 523/: Ռ. Հովսեփյանն առաջ է տանում այն միտքը, որ առաջնորդների կյանքը նաև տառապանքի ճանապարհ է, անխուսափելի թվացող ճակատագիր՝ որոշումներ կայացնելու, հնարավորինս չսխալվելու, պայքարելու և ընդդիմանալու դժվարին լեցուն: Առաջնորդը երկար երկմտում է՝ մնալ, թե՞ հեռանալ, իսկ ճակատագիրը հուշում էր « հեռանալ ագռավների այս ցեղից, ճահճացող այս լճից…»/Ճայերը, Ընտիր երկեր, էջ 524-525/:

Փախչելու գաղափարը փրկություն չէ՝ ասում է գրողը: Այստեղից էլ պետք է ենթադրել ՝ խնդրի լուծման ուղին հայրենի հողի վրա մնալն է: Այստեղ է, որ Առաջնորդի ընտրության հարցը դրվում է հարցականի տակ, և Ուսուցիչն է առաջինը հասկանում, որ սխալվել է իր սկզբունքների մեջ՝ Առաջնորդ ընտրելով, նրան հաղորդելով իմացությունն ու հմտությունները, որպեսզի մյուսները նմանվեն նրան: Իսկ ճշմարտությունն իրականում այլ է. «Նմանվել՝ նշանակում է հպատակվել: Հպատակվել՝ նշանակում է ապավինել» և «հզոր, միաձույլ Երամի գոյությունը սնամեջ խաբկանք էր, որովհետև թույլ անհատների միությունը երբեք չի դառնում հզորություն, և ոչ էլ առարկության չվարժված ուղեղի անգործությունն է միաձուլության նշան: Ազատ, անկաշկանդ միտքը, զգացմունքը պիտի դառնա Առաջնորդ, իսկ նման Առաջնորդ կարող է ծնել ազատ, անկաշկանդ մտքով, զգացմունքով ապրող Երամը»/ Ճայերը, Ընտիր երկեր, էջ 525-5 26/:

Գրողի առաջ քաշած խնդիրները բազմազան են, իրական և լուծելի.եթե միայն ազգովի /Երամ/ չենթարկվենք իշխանություններին /Առաջնորդ/, եթե մեզնից յուրաքանչյուրն ուժեղ լինի, ոչ թե կամազուրկ, կամակատար-հպատակ, եթե միասնական լինենք, ազատ մտածողությամբ և չկաղապարված մտքերով: Թռչել

երազում են բոլորը, ամենամեծ հաճույքը թռիչքի հաճույքն է, վայրէջքը նույնպես թռիչք է, սակայն որի «յուրաքանչյուր մետրը ուղեկցվում էբարձրության կորստով» /Ճայերը, Ընտիր երկեր, էջ 529/:

Հովսեփյանի պատմվածքում պարզորոշ ընդգծված է առաջնորդի դերը, նրա որակական հատկանիշների կարևորությունը, իրեն հավասարը չունենալու գիտակցումը, Երամի յուրաքանչյուր թռչունի հանդեպ անաչառությունը, Ուսուցչի խորիմաստ փորձի հանդեպ հարգանքի դրսևորման ու նրան լսելու կարողության անաչառությունը. «Առաջնորդն իր հավասարը պիտի չունենա, բայց Երամը նրա առաջնորդությամբ պիտի կարողանա անել այն ամենը, ինչն ինքն է կարողանում անել/Ճայերը, Ընտիր երկեր, էջ 517/:

Այլաբանական խոսքի միջոցով, ընտրելով թռչուններին որպես կերպարներ, գրողը ավելի քան խոսում է մեր հասարակության, նրա թույլ տված սխալների, հայրենիքի սիրո, հայրենիքից փախուստ տալու գաղափարի, հայրենիքը կորցնելու վտանգի և այլ խնդիրների մասին: Վեպի հիմքում ազգի/Երամ/ ներկայի ու ապագայի, կամային հատկություններով օժտված ուժեղ անհատների խնդիրն է:

Առաջնորդն ինչ կարող է անել առանց Երամի, Երամը պետք է հետևի Առաջնորդին, բայց Ուսուցիչն ավելի խելոք է, մինչդեռ Առաջնորդը կարող է սխալվել. «Հեշտ է գեղեցիկ խոսելը, երբ ուսերիդ պատասխանատվության փոշի էլ չկա,-դառնացած մտածեց Առաջնորդը:-Հեշտ է վճռի մեջ սխալ տեսնելը. դժվարը վճիռ կայացնելն է: Իսկ վճիռը կայացվել է» /Ճայերը, Ընտիր երկեր, էջ 526/:

Թերևս այս մտայնությունից էլ ծնվել է Առաջնորդ թռչունի մոր մտահոգությունը. «Հրաշալի կազմվածք ունի,-ասել էր հայրը:-Առաջնորդ կդառնա»: «Աստված չանի,-պատասխանել էր մայրը:-Աշխարհի ամենադժբախտ արարածները առաջնորդներն են/Ճայերը, Ընտիր երկեր, էջ 523/:

Պատմվածքը քնարական հուզիչ պատում է մեր կյանքի, մեր գեղեցիկ զգացողությունների ու թռիչքների հանդեպ մեր ամենօրյա երազանքների մասին: Թռիչքը մեր կյանքն է ՝ փաստում է գրողը, առանց թռիչքների կյանքը անկումների շարան է, սնամեջ իրականություն:

Իսկ պատմվածքի յուրաքանչյուր տող, յուրաքանչյուր միտք փիլիսոփայական խորհուրդ ունի՝ սովորեցնող, հուշող, դաստիարակող:

Ահա, ճտերի նոր սերունդը սովորում է թռչել. Նրանք բոլորն էլ համարձակ են,ինքնուրույն, որովհետև Ուսուցիչը ոչ մեկին առաջնորդացու չէր ընտրել.«Ձեզանից նա կդառնա իսկական Առաջնորդ, ով առաջ:վել կխորացնի միտքը, առավել կսրի զգացումները: Թռիչքը մեր կյանքն էր, իսկ կյանքը պետք է իմաստ ունենա»/Ճայերը, Ընտիր երկեր, էջ 530/:

Հեղինակն առաջ է տանում այն միտքը, թե Առաջնորդ չեն դառնում, այլ ծնվում են, և թռիչքն էլ իմաստ պետք է ունենա, և որ մտավոր աճը նախընտրելի է ազատ ճախրանքից: «Ծովը կաթիլներից է կազմված » և թռիչքի իմաստի այս գիտակցումից էլ ծնվում է կաթիլի՝ անհատի ուժը, և այլևս վերանում են բարձրությունների ու անկումների վախերը:

Պատմվածքի ավարտը հայրենի հողին ամեն գնով կառչելու կոչ-հորդոր է. «Երամից քիչ հեռու, մի բարձր թմբի կանգնած, Ուսուցիչն Առաջնորդին երկրի երես ելած մայր ապառ էր թվում, որին կարելի էր փշրել, բայց պոկել՝ երբեք»/Ճայերը, Ընտիր երկեր, էջ 532/: Եվ Առաջնորդի զարմանքին, թե ոնց են առանց Առաջնորդի կարողանում թռչել ճտերը, Ուսուցիչն արձագանքում է. «Նրանց առաջնորդում է Սերը»:

Հայրենիքի զգացողությունը, Հայրենիքի սերը, որ անբացատրելի ու աներևակայելի ուժով նստած է յուրաքանչյուրի մեջ, ետ է պահում փախուստի գաղափարից: Ահա ինչու պատմվածքի ծնվում է խորհրդանշական ծիածանը՝ «ճտերի կտուցներից ընկած ջրակաթիլների և

արեգակի շողերի գրկախառնումից», և «նման ծիածան նրանք չէին տեսել, նույնիսկ հեռավոր ծովերին հասած իրենց երազներում»/Ճայերը, Ընտիր երկեր, էջ 532/:

Պատմվածքն ավարտվում է լավատեսությամբ, գնահատվում թռիչքի իմաստը, հաղթահարվում վախն ու անկումների սարսափը: Այդ ամենը հնարավոր է, եթե ամեն ինչի հիմքում սեր կա և միաբանություն. «Նա վախ չուներ այլևս: Ոչ բաչձրությունից, ոչ անկումից: Նա գտել էր թռիչքի իմաստը: Նա պիտի թռչեր: Եվ թռավ»/Ճայերը, Ընտիր երկեր, էջ 532/:

Պատմվածքի ասելիքի և բովանդակության ու Ռ. Հովսեփյանի անհանգիստ մտորումների կիզակետում ամենակարևորը՝ գային միաձույլ միասնության հիմքում հզոր, ուժեղ անհատի գաղափարն է, քանզի «կամազուրկների միությունը սնամեջ խաբկանք է, որովհետև թույլ անհատների միությունը երբեք չի դառնում հզորություն»:

Պատմվածքի բովանդակությունը մի ուղղություն ունի՝ այն կոչ է՝ ուղղված նոր սերնդին, պատմությանն ու երկրի առաջնորդներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հովսեփյան Ռ. «Ճայերը», Ընտիր երկեր, Սովետական գրող, 1987
2. «Առայժմ պղտոր է մեր տակառի լուծույթը», հարցազրույց Ռ.Հովսեփյանի հետ, Գրական թերթ, 20.12.2013.թիվ 43
3. Ադալյան Ն., «Անցյալ կատարյալի ներկա ժամանակը», Գրական թերթ, 24.08.2013

ВОПРОС ПРЕДВОДИТЕЛЯ И СИЛЬНОЙ ЛИЧНОСТИ В ПОВЕСТИ РУБЕНА ОВСЕПЯНА «ЧАЙЕР»

Силвард Асрян

Соискатель кафедры новейшей армянской литературы и методики ее преподавания Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

В статье автор обращается к основным проблемам идеи народного единства, роли руководителя государства в вопросе народного единства, сильной личности, мощного правительства и т.д., приведенным в повести Р. Овсепяна «Чайер». Выражены намерения автора при включении в повесть сильной личности, а также персонажей страны - Ерама и идейного предводителя – Учителя.

THE PROBLEM OF THE LEADER AND THE POWERFUL INDIVIDUAL IN THE STORY OF RUBEN HOVSEPYAN “SEAGULLS”

SIRVARD ASRYAN

Applicant of the Chair of the Armenian Modern Literature and Its Teaching Methodology, ASPU

The article reflects the idea of national unity in the story of Ruben Hovsepyan “Seagulls”. The phenomena of the leader, strong personality, powerful government and many other problems are investigated by the author. The metaphorical and symbolical idea of the seagull as a leader and a teacher, as well as the swarm as a nation and country is well-grounded in the given article.